և Սանգու լեռը, որ Հաւնի ձորին վրայ կը նայի, 1,910 մէդր 70։

Պաղըլըոյ սահմանին և Միննեւայի լճին մէջ տեղը, Պանտըր լեռը, 1,782 մէդր 02 բարձրութեամբ. Պաղըլըոյ սահմանագլխին վրայ, Տօլ ըսուածը, 1,680 մէդր 85։

Բ. Պիւրէնէայց մէջ, Մալատէդդա, 'ի Սպանիա, 3,404 մէդր. Մոն-Պէրտիւ, 3,351. Պիւգ տը Մոբա, 3,110. Պիկոռի հարաւային գագաթը, 2,876. Մոնգալմ, 3,080. Պադլու, 3,146. Պանիկու, 2,785, և Քնի, 2,504։

Գ. Վոժոյ գօտւոյն մէջ, Սէգիւլէ լեռը, որ բարձր է 1,720 մէդր, և Պոալոմպէ տը Վնէյ, 1,691 մէդր։

Դ. Սօժ լերանց մէջ, Հոնսէ, 1,366 մէդր, որուն վրայ ազգ. տալու նշան մը հաստատուած է. Պալոն տ' Ալզաս, 1,244, և Տոնոն, 1,013։

Ե. Օվէրնեի լերանց կեդրոնին մէջ, Պիօն տիւ Պանդալ, 1,858 մէդր բարձրութեամբ. Պիւյ-Մարի, 1,786. Պիւյ-տիւ-Պարպիէ, 1,729. և Պիւյ-տը-Տօմ, 1,465 մէդր բարձր։

Բոլոր այս բարձրութիւններուն իւրաքանչիւրը մեծ խնամքով և ամենայն ճշդութեամբ չափուած են՝ գաղղիական տէրութեան հոգ տանելովը. և երկու մէդրէ աւելի անճշդութիւն չկրնար գտնուիլ այն լերանց հաշիւներուն մէջ, որոնք քան զայլս քիչ մը աւելի տարակուսական սեպուին։

---

Հնդիկ գերեզմաններու մէջ գտնուած ոսկին:

Բանամայէն հետեւեալ տեղեկութիւնը կը գրէ թղթակից մը՝ Նիւ Եօրքի Հէրալտ կամ Պաթֆայնտըր լրագրին, որուն ստուգութեանը գրողն երաշխաւոր կը թողունք։

«Նոր Ճանապարհորդ մը եկաւ հոս, որ կը պատմէ մեզի Չիրիքի երկրին եղած հնդիկ գերեզմաններուն հարըստութիւնը, որ արդէն այլ և այլ անձանց գրած նամակներէն գիտէինք։

Նայս Ճանապարհորդը 20-25 լիպ
կշռող արձանիկներ ցուցուց մեզի,
այդ գերեզմաններէն հանուած էի
տեսնալու բան է թէ դեղին մետաղ
աւետիսն ինչպիսի եռանդեամբ և
րախութեամբ լցուց տեղւոյս քաղաք
ցիքը։ Հնդիկներն ինքիրենմանն յայ
ներ են այս հարստութեան աղբիւր
իւրաքանչիւր գերեզմանի մէջ քիչ կա
շատ ոսկի կը գտնուի, և որովհետև
թիւ են գերեզմանները նոյն երկ
մէջ, ան արծաթասէր մարդկանց գ
ծունէութիւնն երևան պիտի ելլէ։ Ս
կիէ արձանիկները քիչ մը աւելի խ
րունկ թաղուած են քան զանօթներ
բայց որովհետև այս յետինները քա
մը ոտք միայն խորութեամբ գետ
տակը կը գտնուին, անոր համար չ
խորունկը հարկ չէ երթալ։ Նմնկ
ոսկր չգտնուիր գերեզմանաց մէջ, հ
պա միայն մազի հետքեր։ Նս ալ գն
քանի մը հետաքրքրական անօթներ
նոյնպէս չքնաղ ոսկիէ արձանիկնե
Բայց ես կարծեմ որ երկրին բնիկնե
պղնձին աւելի յարգ կու տան եղէր
թէ ոսկւոյն, և ասոր մէկ ապացոյց
է ինծի համար՝ որ այդ գերեզմաններ
ելած պղնձէ զարդերն առաւելագ
խնամքով և ճարտարութեամբ աշխ
տուած են։ Հնդկին մէկն, որ վեց
պրա ոսկիէ արձանիկներ ծախեր է
կ'ըսէր թէ երկրին ներսերը Մեւէ
անուանեալ լերանց գօտի մը կայ,
ժայռերուն չափ առատ է ոսկին. և հ
կը թաղուին եղեր հնդիկ թագաւ
ները։ Սուրիշ հնդիկ մ' ալ, որուն ան
գէ անօթ մը տուի, խոստացաւ ինծ
այնպիսի տեղ մը ցուցընելու՝ ուր ոսկ
գայլախազի չափ սովորական էր։ Ն
րորդ հնդիկ մ' ալ առաջարկեց ինծ
որ չորս օրուան մէջ տանի զիս հին քա
քի մը աւերակները, որուն գերեզմ
ներուն մէջ մարդուս գլխէն աւելի մ
ոսկիէ անօթներ կան. բայց կարծեմ թ
խմցընել տուած ըմպելիքիս զօրութի
էր որ ասանկ մեծ մեծ ջարդել կու տա
անոր։ Սակայն ներսերէն եկած ոսկւց
քանակութիւնը կը ցուցընէ որ առա

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-07-12 08:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.c2847014
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յանուր հանուեղերը ։ Ո՜ ւրիշի քանի
՚նդիկ քաղաքներ կան, ո՛րոնցմէ ան-
րակոյս շատ ոսկի պիտի ելլէ „ ։

## ՄԱՆՐԱՎԷՊ

*Գողի մը խորամանկութիւնը ։*

Անցեալ օրերը Գեղեցիկ Աստուածած-
փողոցին մէջ, ժամը իրիկուան եօթ-
ատեններ, երիտասարդին մէկը
ն մը դուռը կը զարնէ ։ Տանը խա-
ւնը պատուհանէն դուրս հանելով
ւխը, կը հարցընէ. „ Ո՞վ է „ ։ Պա-
տխան կու տայ վարէն երիտասարդը.
Ներհեք ըրէ, խաթուն (այս անուան),
ց դուռը, հրամանքիդ ըսելու խօսք
ունիմ „ ։ Կինը վերէն աղէկ մը զննե-
զարնկայ գլխէն մինչև ոտքը, կը
նայ որ մաքուր հագուստով կոկիկ
րդ մըն է, ու ինչպէս որ սովորու-
իւն է զգեստէն մարդը դատել, կը
նայ դուռը ու վեր կը հրամցընէ ։
իտասարդը կ՚ելլէ վեր, Բարև, Ա-
ւծոյ բարին. կ՚ըսէ. „ Խաթուն,
ամանքիդ (այս անուան) որդին տաքէն
որնած ջրերու մէջ է, և քովը ուրիշ
րդ չգտնելով ինծի աղաչեց որ գամ
ամանքէդ շապիկ մը ուզեմ „ ։ Կինը
ոկսի տարակուսիլ. բայց մէկալը ա-
նչթողլով եռևէն կը կպցընէ. „ Հրա-
նքիդ որդին իմ ամենէն աղէկ բարե-
մներէս մէկն է, և ատոր համար,
ւթուն, կրնաս հպարտանալ ուրիշ
կտոց վրայ՝ որ Սենեակոյ մէջ մէկն
այնպէս զաւակ չունի. մինչև չար
լունները ալ ստիպեալ են վրան աղէկ
ալու „ ։ Աս գովեստին վրայ կինը
ոկսի սնտուկին մօտենալ ։ „ Բայց
չ, կը հետևեցընէ երիտասարդը, մի-
է միայն ան է մէջերնին. հինգն ալ
ր իրաւցընէ հինգ որդի ունէր ) մէկ-
կէ գերազանց, և կրնան Սենեակոյ
մէնէն ընտիր և ազնիւ երիտասար-
ոց կարգը սեպուիլ „ ։ Սնտուկը կը
ացուի ։ Երիտասարդը կը շարունակէ.

„ Պ. Յովհաննէսեան աւելի իր գործ-
քին վրայ ուշադիր ո՞ր երիտասարդն է
արդեօք. Պ. Պօղոսեան աւելի հանճա-
րաւոր ո՞ւր կը գտնուի. հապա Պ. Գրի-
գորը որ իրաւցընէ մարդ միանգամ մը
միայն հետը տեսնուելու ըլլայ նէ՝ կը
սիրահարուի ։ Բայց միւս կրօնաւոր որ-
դիդ զամէնքը կ՚անցընէ, շիտակը քաղ-
քին մէջն ալ հրեշտակի անուն ունի,
ու սիրտս անհանգիստ կը սպասեմ երբ
պիտի ըլլայ որ մէյ մը դառնայ գեղէն
որ ուզածիս պէս գրկուիմ հետը ։ Իրա-
ւի օրհնեա՛լ ընտանիք, և երջանիկ
մայր „ ։

Ա՛լ կ՚ելլէ բարի կնկան սիրտը, ու
աչուըները սիրոյ արցունքով լցուած՝
շապիկը դուրս կը հանէ. ու ատեն ա-
տեն՝ „ Իրաւ է ինծի չկըյնար տղոցս
վրայ խօսիլ, բայց շնորհակալ եմ Ա-
տուծոյ՝ իրենց այնպէս աղէկ բնութիւն-
ներ տուեր է, որ հինգին վրան ալ գոհ
եմ ։ Ինչուան հիմա նախատական և ոչ
պզտի խօսք մը լսած եմ բերաններնուն,
միշտ հնազանդ եղեր են ինծի, իրարու
հետ սիրով և բարեկիրթ ։ — Բայց,
մայրական ջանքն ալ մեծ բան է, կը
կրկնէ երիտասարդը, որով գիտացեր է
կրթել զանոնք „ ։

Ծանրութեամբ մը ժպտելով կինը
շնորհակալ կ՚ըլլայ, և կ՚աղաչէ երիտա-
սարդին իր որդւոյն համար որ զգուշու-
թիւն ընէ տաքէն և շապիկը շուտով
փոխէ. միանգամայն իրեն կրած աշխա-
տանքին համար ալ շնորհակալութիւն
աւելցընելով, շապիկը ձեռքը կու տայ ։
Դարձեալ երկու կողմէն քաղաքավա-
րութեան օրէնքն ու բարևները լմնցը-
նելէն ետքը՝ երիտասարդը վար կ՚իջ-
նայ, կը բանայ դուռը, ու կ՚երթայ
շապկին ուրիշ նոր տէր գտնելու ։

ԿՈՄՄԻ

*Հեղինակն իր գրած լրագրին մէջ գրած է այս պատմութիւնն՝ իբրև վէնետիկ հանդիպած ։*

Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-07-12 08:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.c2847014
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google